ՀՀ ԼՄ Օձունի համայնքապետարանում կայանալիք մրցույթի մասին

11.03.2022

Տիպ՝ Մրցույթի մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ

ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանը 2022 թվականի, ապրիլի 21-ին ժամը 1200-ին, հայտարարում է վարձակալության իրավունքիբաց մրցույթ, համայնքային սեփականության անշարժ գույքի, հետևյալ լոտով՝

Լոտ 1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝համայնք) սեփականությունը հանդիսացող, համայնքի կազմի մեջ մտնող Արևածագ գյուղի կադաստրային քարտեզի 06-020-0117-0031 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրի հողատեսքի, 0.5217հեկտար մակերեսով հողամասը գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

Վարձակալության իրավունքի տարեկան մեկնարկային վարձավճարը կազմում է12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, մասնակցության վճար՝ տաս հազար (10000) ՀՀ դրամ:

Մրցույթում հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի կողմից լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Անշարժ գույքն ունի համապատասխան կոմունալ հնարավորություններ, մոտեցում ընդհանուր օգտագործման ճանապարհից:

Վարձակալության իրավունքի մրցույթը տեղի կունենա 2022 թվականի, ապրիլի 21-ին, ժամը 11:00-ին, Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ փողոց 6 շենք 10, առաջին հարկ, թիվ 2 սենյակում:Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2022 թվականի ապրիլի 19-ը: Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայանալ Օձունի համայնքապետարան՝ անձը հաստատող փաստաթղթով: Լոտերի ուսումնասիրության և կանոնակարգին ծանոթանալու համար ներկայանալ Օձունի համայնքապետարան կամ զանգահարել +37477707038 կամ +37477566724 հեռախոսահամարներով: